

ն ա խ ա գ ի ծ

«Ճարտարապետության և շինարարության
Հայաստանի ազգային համալսարան»
հիմնադրամի

գիտխորհրդի 2015թ. _____ -ի նիստում:
Արձանագրություն N _____

գ ի տ խ ո ռ հ ի դ ի ն ա խ ա գ ա հ , ո ե կ տ ո ռ Դ

Գ. Շ. Գ ա լ ս տ յ ա ն

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

**«ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂ ԱՄԵՆԱՄՅԱ
ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ**

I. Ը նդ հանուր դրույթներ

1.1. Սույն կանոնակարգով սահմանվում է «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ համալսարան) «տարվա լավագույն ուսանող» անվանակարգով ամենամյա մրցանակաբաշխության (այսուհետ՝ մրցանակաբաշխություն) կազմակերպման և անցկացման, հավակնորդներին մրցանակաբաշխության ներկայացնելու և մրցանակ շնորհելու կարգը:

1.2. Մրցանակաբաշխության նպատակն է խրախուսել համալսարանի բակալավրիատում և մագիստրատուրայում սովորող բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին մասնագիտական հմտությունների ու ունակությունների բարձրացմանը գիտական ու հասարակական ակտիվությունը:

1.3. Մրցանակաբաշխությունը կարող են մասնակցել համալսարանի առկա ուսուցմամբ բակալավրիատի 3-րդ, 4-րդ կուրսերի, համալսարանի բակալավրիատի շրջանավարտ, մագիստրատուրայի 1-ին և 2-րդ կուրսերի բոլոր ուսանողները:

1.4. Մրցանակաբաշխությունը կազմակերպվում և անցկացվում է տարին մեկ անգամ՝ նոր ուսումնական տարվա առաջին կիսամյակում՝ նախորդ ուսումնական տարվա արդյունքների հիման վրա:

II. Մրցանակաբաշխության անվանակարգերը և թեկնածուների առաջադրման կարգը

2.1. Մրցանակաբաշխությունը կազմակերպվում է հետևյալ անվանակարգերով՝

- 1) «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի տարվա լավագույն ուսանող».

- 2) «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ճարտարապետության ֆակուլտետի տարվա լավագույն ուսանող».
- 3) «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի շինարարական ֆակուլտետի տարվա լավագույն ուսանող».
- 4) «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի դիզայնի և զբոսաշրջության ֆակուլտետի տարվա լավագույն ուսանող».
- 5) «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի կառավարման և տեխնոլոգիայի ֆակուլտետի տարվա լավագույն ուսանող».
- 6) «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի քաղաքային տնտեսության և էկոլոգիայի ֆակուլտետի տարվա լավագույն ուսանող».

2.2. «Տարվա լավագույն ուսանող անվանակարգով» մրցանակաբաշխությանը կարող են մասնակցել բոլոր այն ուսանողները, ովքեր առնվազն 2 ուսումնական տարի առանց ընդհատման սովորել են համալսարանում և մրցանակաբաշխության անցկացման ուսումնական տարվա նախորդ երկու կիսամյակների ընթացքում ունեցել են գերազանց կամ բարձր առաջադիմություն, ինչպես նաև ունեն սույն կանոնակարգի 3.3 կետում նշված ցուցանիշերը: Պարտադիր զինվորական ծառայությունից զորացրված ուսանողների ծառայության ժամկետը ընդհատում չի համարվում:

2.3. Մրցանակաբաշխության անցկացման օրվանից առնվազն 30 օր առաջ մրցանակաբաշխության հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) հայտարարում է մրցանակաբաշխության անցկացման պայմանների և թեկնածուների առաջադրման կարգի մասին: Թեկնածուների առաջադրումն իրականացվում է հայտերի միջոցով (հայտի ձևը սահմանված է սույն կանոնակարգի թիվ 1 հավելվածում): Հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանվում է մրցանակաբաշխության անցկացման օրվանից առնվազն 10 օր առաջ: Վերջնաժամկետը սահմանում է հանձնաժողովը:

2.4. Մրցանակաբաշխությանը մասնակցելու (որպես թեկնածու առաջադրվելու) համար ուսանողը՝ ինքնաառաջադրամբ իր ֆակուլտետի դեկանատ է ներկայացնում դիմում՝ կցելով , իսկ յուրաքանչյուր դեկան մրցանակաբաշխության մասնակից յուսանողի հայտին կից ներկայացվում են մրցանակաբաշխության մասնակցի մասին հետևյալ փաստաթղթերը.

- ա) պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների առնվազն երեք բնութագիր,
- բ) համալսարանի և ֆակուլտետի ուսանողական խորհրդի և բնութագրերը,
- գ) տպագրված գիտական աշխատանքների պատճենները կամ դրանք հավաստող այլ փաստաթղթեր (եթե այդպիսիք կան),
- դ) ներհամալսարանական ակտիվությունը հավաստող փաստաթղթեր (եթե այդպիսիք կան),
- ե) արտահամալսարանական ակտիվությունը հավաստող փաստաթղթեր (եթե այդպիսիք կան),
- զ) այլ փաստաթղթեր և նյութեր, որոնք լավագույնս կներկայացնեն մրցանակաբաշխությանը մասնակից ուսանողի՝ սույն կանոնակարգի 3.3. կետում նշված ցուցանիշները:

Ներկայացված բնութագրերում և այլ փաստաթղթերում ուսանողի՝ սույն կանոնակարգի 3.3. կետում նշված ցուցանիշները ներկայացվում են հստակ և հնարավորինս մանրամասն:

2.5. Մրցանակաբաշխության հայտերի ընդունման հայտարարությամբ նշված վերջնաժամկետը լրանալուց հետո՝ երկօրյա ժամկետում, համալսարանի կայքում հրապարակվում է հայտ ներկայացրած ուսանողների ցուցակը: Եթե որևէ ֆակուլտետից սահմանված ժամկետում ստացվել է սույն կանոնակարգի 2.2. կետի պահանջներին համապատասխանող երեք հայտից պակաս թվով

հայտ, ապա ֆակուլտետի ղեկանը հայտերի ներկայացման վերջնաժամկետից հետո՝ երեք օրվա ընթացքում, կարող է առաջադրել լրացուցիչ թեկնածուներ:

III. Մրցանակաբաշխության հաղթողների ընտրության ընթացակարգը

3.1. Ըստ անվանակարգերի մրցանակաբաշխության հաղթողի ընտրությունն իրականացվում է մրցութային կարգով, երկու փուլով՝ մրցույթին մասնակից ուսանողի վերաբերյալ ներկայացված տվյալների բազային գնահատման և հավակնորդի հետ հարցազրույցի արդյունքում ձևավորված մրցույթին մասնակից ուսանողի ընդհանուր միավորով:

3.2. Առաջին փուլում հանձնաժողովը դիտարկում է մրցանակաբաշխության հավակնորդների համապատասխանությունը մրցանակաբաշխության պայմաններին և սույն կանոնակարգով սահմանված տվյալների կատարում տվյալների բազային գնահատում:

3.3. Ըստ անվանակարգերի մրցանակակրին որոշելու համար դիտարկվում են ուսանողի հետևյալ ցուցանիշները՝ ըստ միավորների. **մասնակցությունը կրթական գործընթացներին**

ա) ակադեմիական բարձր առաջադիմություն (նախորդ ուսումնական տարվա գնահատականները),
բ) ներգրավվածություն գիտական աշխատանքներում,

գ) հասարակական ակտիվություն,

դ) արտահամալսարանական ակտիվություն՝ մշակույթի, սպորտի, արվեստի և այլ ոլորտներում հաջողություններ:

մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում մարտական հերթապահության մեջ ընդգրկված պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած ուսանողներին՝ մինչև 5 միավոր .

Զինվորական պարգևնորի՝ մեդալների, շքանձաննների, պատվոգրերի, շնորհակալագրերի համար մինչև 5 միավոր

ա) Զեկուցամաբ մասնակցություն գիտաժողովներին՝ սեմինարներին, համաժողովներին և գիտահետազոտական ուղղվածություն ունեցող այլ միջոցառումներին՝ մինչև 10 միավոր 3

ե) Հեղինակավոր մրցանակի կամ միջազգային օլիմպիադայի դիպլոմին արժանանալու դեպքում սահմանվում է 5 միավոր, երկու և ավելի դեպքում՝ 7 միավոր:

1) մասնակցությունը միջբուհական, քաղաքային, հանրապետական և միջազգային գիտական մրցույթներին, օլիմպիադաներին, ուսանողական գիտական աշխատանքներին՝ մրցանակի կամ դիպլոմի արժանանալու դեպքում՝ մինչև 5 միավոր.

2) Մասնակցություն հասարակական գործընթացներին՝ 1 միավոր.

1) Համալսարանի կանոնադրության և ներքին կարգապահության կանոնների պահպանումը, կարգապահությունը, վարվելակերպը, բարոյական հատկանիշները՝ մինչև 5 միավոր.

2) Մշակույթի, սպորտի, արվեստի և այլ ոլորտներում նշանակալի հաջողությունների համար մինչև 5 միավոր:

3.4. Առաջին փուլի արդյունքում յուրաքանչյուր ֆակուլտետից ըստ միավորների ընտրվում են մրցանակաբաշխության հաղթողի երեք հավակնորդ: Հիմնական հավակնորդների անունները հրապարակվում են համալսարանի կայքում մրցանակաբաշխության անցկացման օրվանից (մրցանակների հանձնման հանդիսավոր արարողությունից) առնվազն երեք օր առաջ:

3.5. Հաղթողի ընտրության փուլում յուրաքանչյուր ֆակուլտետից մրցանակաբաշխության հաղթողի երեք հավակնորդների տվյալներն և նյութերը ներկայացվում են համալսարանի մրցութային հանձնաժողովին: Անհրաժեշտության դեպքում հավակնորդը կարող է հրավիրվել հանձնաժողովի նիստին:

3.6. Հիմնական հավակնորդները հրավիրվում են մասնակցելու մրցանակների հանձնման հանդիսավոր արարողությանը. մրցույթում հաղթող չճանաչված հիմնական հավակնորդները պարզևատրվում են Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի պատվոգրով:

3.7. Հերոդ Ադամ Սահակյանի անվան մրցույթի հաղթողներին տրվում է կրթաթոշակ վեց ամիս ժամկետով, յուրաքանչյուր ամիս՝

ա) 1-ին հիմնական հաղթողին՝ 50 հազար դրամ

բ) 2-րդ մրցանակի հաղթողին՝ 35 հազար դրամ

գ) 3-րդ մրցանակի հաղթողին՝ 25 հազար դրամ

Կրթաթոշակները տրվում են բարեպաշտ սերունդ հիմնադրամի ֆինանսական միջոցների հաշվին

3.8. Մրցույթի հաղթողներ ճանաչված ուսանողները իրավունք չունեն մասնակցելու հաջորդ տարվա մրցութին:

IV. Մրցանակաբաշխության հանձնաժողովը, կազմը և գործունեության կարգը

4.1. Մրցանակաբաշխությունը կազմակերպում և անց է կացվում «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի տարվա լավագույն ուսանող» և «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ֆակուլտետի տարվա լավագույն ուսանող» անվանակարգերով ամենամյա մրցանակաբաշխության հանձնաժողովը, որը բաղկացած է 9 անդամից: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են՝ համալսարանի ռեկտորի առաջին տեղակալ-պրոռեկտորը (նախագահ), ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը, կրթական ծրագրերի ուսումնամեթոդական վարչության պետը, լրատվության բաժնի պետը (քարտուղար), արհեստակցական կազմակերպության նախագահը, գիտահետազոտական սեկտորի ղեկավարը, իրավաբանական բաժնի ներկայացուցիչը, ուսանողական խորհրդի նախագահը: Հանձնաժողովի կազմում յուրաքանչյուր ֆակուլտետից ընդգրկվում են նաև տվյալ ֆակուլտետի ղեկանը և ուսանողական խորհրդի նախագահը:

4.2. Հանձնաժողովի կազմը հաստատում է համալսարանի ռեկտորը:

4.3. Հանձնաժողովի նախագահը նշանակվում է հանձնաժողովի կազմից՝ ռեկտորի հրամանով:

4.4. Հանձնաժողովի գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով:

4.5. Հանձնաժողովը՝

ա) սահմանում է իր գործունեության աշխատակարգը

բ) հրապարակում է հայտարարություն մրցանակաբաշխության անցկացման կարգի մասին.

գ) որոշում է մրցանակաբաշխության անցկացման օրը, հայտերի ներկայացման վերջնաժամկետը.

դ) ամփոփում է մրցույթի արդյունքները

որոշում է մրցանակաբաշխության՝ ըստ տարակարգերի հաղթողներին.

4.6. Մրցույթի հաղթողները որոշվում են հավաքած միավորների քանակի հիման վրա:

V. Հանձնաժողովի ընդունած որոշումների բողոքարկման կարգը և ժամկետները

5.1. Հանձնաժողովի ընդունված որոշումները կարող են բողոքարկվել համալսարանի ռեկտորին, մրցանակաբաշխության արդյունքների հրապարակման օրվանից հետո՝ մեկօրյա ժամկետում: Հանձնաժողովի կողմից որոշումների ընդունման կամ մրցանակաբաշխության կազմակերպման և անցկացման գործընթացում Հայաստանի Հանրապետության օրենսդրության կամ համալսարանի ներքին իրավական ակտերի, այդ թվում՝ սույն կանոնակարգի խախտումներ ի հայտ գալու դեպքում համալսարանի ռեկտորի պատճառաբանված որոշմամբ կատարվում է մրցանակաբաշխության արդյունքների վերանայում:

VI. Եզրափակիչ դրույթներ

6.1. Սույն կանոնակարգը հաստատվում, փոփոխությունները և լրացումները կատարվում են համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:

6.2. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում գիտական խորհրդի որոշումը համալսարանի ռեկտորի կողմից հաստատվելուց հետո հաջորդ օրվանից և հրապարակվում համալսարանի համացանցում:

Գիտական քարտուղար՝

Լ. Հ. Լևոնյան

գիտխորհրդի որոշում № _____

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի տարվա լավագույն ուսանող ամենամյա մրցանակաբաշխության մասնակցության

1. Համալսարանի _____ ֆակուլտետի
(ֆակուլտետի անվանումը)
_____ կուրսի _____ խմբի ուսանող _____-ի՝
(անուն, ազգանուն)

թեկնածությունը ներկայացվում է «Համալսարանի (ֆակուլտետի) տարվա լավագույն ուսանող» մրցանակաբաշխությանը մասնակցելու համար:

2. _____-ը համալսարանում առանց ընդհատման սովորում է 201__
201__թթ. ուսումնական տարվանից:

3. Հայտին կից ներկայացվում է ուսանողի վերաբերյալ մրցանակաբաշխության մասին կանոնակարգում ամրագրված ցուցանիշներբերումների վերաբերյալ սահմանված փաստաթղթերը:

Ֆակուլտետի ղեկան _____